

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ	4
Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում	6
Կրտսեր դպրոցականի տարիքային և հոգեբանաման կավարժական առանձնահատկությունները	9
ՏՀՏ -ների կիրառման արդյունավետությունը տարրական դպրոցում	14
Եզրակացություն	19
Օգտագործված գրականության ցանկ	20

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Ժամանակակից դպրոցականը ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Տարրական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի: Այստեղ առաջանում են մի շարք խնդիրներ . որտեղ գտնել և ինչպես ներկայացնել նյութը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ- դասագիրք» սխեմային ավելանում է նոր օղակ՝ ուսուցում տեղեկատվական- հաղորդակցական տեխնոլոգիաներով(SՅՏ):Յետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն լինի մեդիագրագետ: Կրտսեր դպրոցականին տրված արդյունքներից մեկը պիտի լինի ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների իմացությունն ու հմտությունը, կիրառելով այն ինքնակրթության համար: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները կիրառելով տարրական դպրոցում կրտսեր դպրոցականներին դարձնում է ավելի ակտիվ, իսկ ուսուցիչը հանդես է գալիս որպես օգնական, խրախուսում անհատականությունն և նախաձեռնությունը: Նյութի մատուցումը տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, աշակերտին տալով կառավարելու և ինքնակառավարելու հմտություն: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները տալիս են հնարավորություն արագ կատարել փոփոխություններ ու լրացումներ, պահպանել տեղեկատվությունն ու միաժամանակ մնալ հասանելի: Նպաստում է նյութի արագ յուրացմանը, աշակերտին ներգրավում է ուսացանվող նյութի մեջ:Տեղեկատվական- հաղորդակցական տեխնոլոգիաները օգտագործում են և՛ նոր նյութ մատուցելիս, և՛ դասի ամրապնդման, կրկնության, և՛ դպրոցական միջոցառման ժամանակ:Այս առումով թեման արդիական է:

ՆՊԱՏԱԿԸ՝ ուսումնասիրել և վերլուծել ՏՅՏ –ների դերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում:

Նպատակին հասնելու համար առաջադրում ենք հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել՝ ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաները
- Վերլուծել՝ՏՅՏ- ների կիրառման առանձնահատկությունները
- Բացահայտել՝ ՏՅՏ արդյունավետությունը տարրական դպրոցում Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, II գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները ուսուցման մեթոդների, ձևերի համալիր է, որը հնարավորություն է տալիս կատարելագործելու ուսուցման գործընթացը, բացահայտելու սովորողների ստեղծագործական ներուժը, խթանելու ճանաչողական ակտիվությունը, ինքնուրույնությունը: «Տեխնոլոգիան» ծագել է հունարեն technu(արվեստ, գիտություն) և logos (ուսմունք) բառերից: Տեխնոլոգիաների զարգացման միտումները ուղղակիորեն կապված են կրթության մարդասիրացման, կրտսեր դպրոցականի անձի զարգացման, ինքնակատարելագործման և ինքնաարդիականացման հետ: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները պետք է խթան հանդիսանան սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների շարքին են դասվում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները:Այսօր կրթության բնագավառը անհնար է պատկերացնել առանց ժամանակակից տեխնոլոգիաների առկայության: Տեխնոլոգիան որպես մարդու և հասարակության կարիքները բավարարող առարկաների ստեղծման արվեստ և գիտություն, ոչ այլ ինչ է, եթե ոչ միջոց աշխատանքային ունակությունները ընդլայնելու համար:

Տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում կարող են հանդես գալ որպես.

- Դասավանդման գործիք ուսուցչի համար
- Հետազոտության գործիք աշակերտների համար
- Դասի կազմակերպման, կառուցման գործիք
- Ուսումնառության և գործունեության գործիք

«Յուրաքանչյուր տեխնոլոգիայի մշակում պահանջում է հսկայածավալ տեղեկույթ,հատուկ ընտրություն, գիտական նորագույն հետազոտությունների արդյունքների օգտագործում »:[2, էջ 19]

Եթե տեղեկատվությունը չի ընկալվել,ապա այն չի կարող յուրացված համարել, չի կարող դառնալ սովորողի սեփականությունը: Այդ նպատակով պետք է տեխնոլոգիաները մեթոդապես ճիշտ կիրառել` տեղեկատվությունը դարձնելով սովորողի մշակույթի և ձևավորված աշխարհայացքի տարրը:

Ներկա ժամանակաշրջանում կրթական տեխնոլոգիաները դարձել են անհրաժեշտ պայման` արդյունավետ մոտեցում և ժամանակակից մանակավարժական մեթոդաբանություն ցուցաբերելու համար: Ուսուցման կրթական տեխնոլոգիաների շնորհիվ զարգանում են աշակերտների մտածողությունն ու համակարգչով աշխատելու հմտությունները:Ունենալով տարբեր առարկաների ժամերին համակարգչի օգտագործման հնարավորություն դպրոցը կվերազինվի նոր որակի պրակտիկ և մեթոդական հնարավորություններով: Ուսումնական գործընթացում տեղեկատվական- հաղորդակցական տեխնոլոգիաները ունեն շատ մեծ կիրառություն.

- Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է ստեղծագործական ու նորարարական մոտեցումների զարգացմանը, ինչը չափազանց կարևոր է հիմնախնդիրների վրա հիմնված կառուցողական դասարանային միջավայր ստեղծելու համար:
- ՏՐՏ-ի գործածությամբ հնարավոր է այնպիսի հիմքեր ստեղծել, որոնք անհրաժեշտ են նոր հասկացություն, օբյեկտ և ընթացակարգ ներմուծելիս: Այդպիսիք են թվաբանական գործողություններ թվերով, նոր բառեր ու արտահայտություններ սովորելը, երբ դրանք աշակերտները կապում են համապատասխան գրաֆիկական արտահայտության հետ:
- ՏՐՏ-ի գործածությունը կարող է առավել արդյունավետ ու ինտենսիվորեն նպաստել ազգային ուսումնական պլանով նախատեսված կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Այդպիսիք են օրինակ՝ թե՛ տեսողական, թե՛ քանակական օրինաչափությունների հայտնաբերման կարողությունը, օբյեկտների չափերը գտնելու և գնահատելու կարողությունը, տարածության ընկալումը, համագործակցության կարողություններ, աշխատանքային միջավայրի պատրաստումը և այլն: Բացի նրանից, որ ՏՐՏ-ի գործածությունն աշակերտներին աջակցում է տարբեր ուսումնական առարկաներով նախատեսված արդյունքներ ձեռք բերելու մեջ այլ նաև նպաստում է իրազեկության զարգացմանը, իսկ դա կարևոր է ժամանակակից կյանքում անհրաժեշտ թվայնացված գրագիտություն ձեռք բերելու համար: Կրտսեր դպրոցում ՏՐՏ գործածելիս ոչ պակաս ուշադրություն պետք է դարձվի այնպիսի իրազեկությունների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպիսիք են համակարգչի սարքավորումների գործածությունը (ստեղնաշար, մկնիկ, էկրան), թվայնացված սարքավորումների և էլեկտրոնային ռեսուրսների պարամետրերի վերլուծությունը (հիշողություն, գույների քանակ, անհրաժեշտ ապարատային ռեսուրսներ), գործառական համակարգի ու ֆայլի հասկացությունների վերլուծություն, նաև այն որ տեքստային, գրաֆիկական և ձայնային նյութերը թվայնացված սարքավորման մեջ պահպանվում են միայն տեսակի միավորի մեջ: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում նպաստում են աշակերտների մոտիվացիայի աճին, և դասը դարձում են բովանդակալից և ինտերակտիվ:

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ժամանակակից տարրական դպրոցում խաղը համարվում է իբրև ինքնուրույն տեխնոլոգիա և մանակվարժական տեխնոլոգիաների կիրառման հիմնական ձևերից է: Խաղը շարժունակ տեխնոլոգիա է, բազմակողմանի գործունեություն: Երեխայի զարգացման և դաստիարակության գործում հսակայական դերը պատակնում է խաղին: Այն համարվում է երեխայի բարոյականային ունակությունների և կարողությունների ձևավորման արդյունավետ միջոց, որի ընթացքում իրականացվում է շրջապատող իրականության հետ երեխայի և աշխարհի փոխազդեցության և փոխներգործության կենսական պահանջմունքի բավարարումը: «Խաղի միջոցով ձևավորվում և դրսևորվում է երեխայի կողմից շրջապատող իրականության հետ հաղորդակցվելու և այն փոխելու միտումը: Սա խաղի էական և ընդհանրական տրամաբանությունն է, քանի որ իրականության ստեղծագործական ձևափոխման կարողությունն ըստ էության ձևավոնվում է խաղի ընթացքում»:[3, էջ 82-85]: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում առավել արժևորվել է հատկապես վերջին շրջանում, երբ դպրոց մուտք գործեցին 6 տարեկան երեխաները: Խաղային տեխնոլոգիաները զարգացնում են երեխաների հոգեճանաչողական գործընթացը, օգնում ուսուչցին ակտիվացնելու երեխաների ուսումնական գործունեությունը: Խաղին առանձնահատուկ կարևորություն է տրվում հատկապես կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործընթացում: Ըստ որոշ հոգեբանների խաղն անձի ձևավորման առաջին աստիճանն է և զարգացման հենց այդ փուլի գործունեության հիմնական տեսակը, որն ուսուցման հետ զուգահեռ շարունակում է պահպանել իր տեղը: Խաղային տեխնոլոգիան կրտսեր դպրոցականին ընձեռում է համամարդկային արժեքներ, տարբեր ազգերի և ժողովուրդների մշակույթը յուրացնելու հնարավորություն: Միևնույն ժամանակ խաղը ինքնարտահայտման, ինքնադրսևորման միջոց է, որտեղ երեխան ազատ է իր գործողություններում, ստուգում է իր ուժերն ու հնարավորությունները: Ստեղծվում են խաղային իրավիճակներ, ներկայացվում է որաշակի սոցիալական փորձ, ձևավորվում և զարգանում են երեխայի վարքագիծը, կամային որակները, մշակվում են անձնային և համամարդկային արժեքներ: Խաղի միջոցով երեխան աշխարհն ընկալում է իր ամբողջության մեջ, եթե մայրենի լեզվի , մաթեմատիկայի, ընթերցանության և այլ առարկաների միջոցով երեխան աշխարհը պատկերացնում է մասնատված ձևով, ապա խաղը նպաստում է, որպեսզի նա աշխարհը տեսնի և ճանաչի միասնական համակարգում:

Կարևոր է, որ խաղը ինքնանպատակ չլինի, այլ դառնա ուսումնական գործընթացի տրամաբանական բաղադրիչ: Առանձնապես հատկանշական են այն խաղերը, որոնք հորինում է հենց ինքը երեխան: Կրտսեր դպրոցում առանց խաղի գրեթե անհնար է իրականացնել արդյունավետ ուսուցում, առանց խաղային տեխնոլոգիաների անհնար է հասնել ժամանակակից ուսուցման խնդիրների արդյունավետ լուծմանը: Խաղային տեխնոլոգիայի կառուցվածքի մեջ են մտնում խաղի նպատակադրումը, խաղի պլանավորումը, արդյունքների վերլուծությունը: Եթե խաղային տեխնոլոգիան ճիշտ է կազմակերպված, ապա երեխան առանց երկմտելու մտնում է խաղի մեջ, փորձում է իր ուժերը հասակակիցների հետ: Այն երեխան որի տրամաբանությունը զարգացած է, կարողանում է արագ մտնել դերի

մեջ և ոչ միայն ինքն է փորձում խաղալ խաղի կանոններով այլև իր աշխուժությամբ վարակում է ընկերներին: Ստորև ներկայացվում է մի քանի հիմնավորում խաղային տեխնոլոգիաների կիրառության և արդյունքների վերաբերյալ:

1. «Խաղային տեխնոլոգիաների միջոցով աշակերտները հաղորդակցվում են իրական աշխարհի խնդիրներին: Հնարավորություն է տալիս տեղեկատվությունը մատուցել հարցերի, իրավիճակների, դերակատարման և այլնի միջոցով »: : Խաղի ընթացքում մասնակիցները հետևում են իրենց և մյուսների վարքին:
2. Խաղային տեխնոլոգիաները ավելի արդյունավետ և պատկերավոր են դարձնում ուսումնական գործընթացը: Անձանոթ կամ նույնիսկ դժվարամարս նյութը խաղային տեխնոլոգիայի մատուցմամբ դառնում է ավելի դյուրըմբռնելի:

Խաղային տեխնոլոգիաները օգնում են իրականացնել մի շարք մանկավարժական խնդիրներ՝

- Մեծացնել սովորողի ներգրավվածության աստիճանը
- Փոփոխել հմտությունների և գիտելիքների պահանջվող մակարդակը
- բազմազան դարձնել տեսական և գործնական տեղեկատվության զուգակցման տարբերակները:

Խաղային տեխնոլոգիաները ճիշտ արժեքավորելու համար նախ և առաջ ուսուցիչները պետք է հստակ գիտակցեն խաղի գործառույթները, կարողանան նպատակաուղղված խաղային ծրագրերը զուգակցել դիդակտիկական վարժություններին :

Ինչպես նաև չենք մոռանում, որ խաղային տեխնոլոգիաները պետք է համպատասխանեն կրտսեր դպրոցականի տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին:

«Խաղը որպես ուսուցման մեթոդ և ավագ սերնդի՝ հաջորդ սերնդին փորձի փոխանցման միջոց, կիրառվել է դեռևս հին ժամանակներում: Ժամանակակից դպրոցում խաղային գործունեությունը իրագործվում է հետևյալ դեպքերում՝

- Որպես ինքնուրույն տեխնոլոգիա
- Որպես մանկավարժական տեխնոլոգիայի բաղադրիչ
- Որպես դասի կազմակերպման ձև» [1, էջ 76]

Բոլոր գործնական խաղերի տեխնոլոգիան կազմված է մի քանի փուլերից՝

- Նախապատրաստական
- Մուտք խաղի մեջ
- Խաղի գործընթացը

- Արդյունքների վերլուծություն և գնահատում

Սակայն չպետք է մոռանալ, որ «խաղային տեղնուղղիաների իրականացումն ու արդյունավետությունը պայմանավորված են մանկավարժի նախապատրաստական լուրջ աշխատանքով: Այս տեխնոլոգիան բավականին ճկուն է ու հեշտությամբ է հարմարեցվում տարբեր իրավիճակների» [5, էջ 20] :Խաղը հենց այն գործունեությունն է, որում երեխան սկզբում բնօրինակ, իսկ հետո ինտելեկտուալ ձևով յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը: Երեխան իր համար բացահայտում է մարդկային փոխհարաբերությունների աշխարհը, գործունեության տարբեր բնագավառները և մարդկանց շփման, հաղորդակցման ֆունկցիաները: Ամենից առաջ խաղի միջոցով երեխաները սովորում են միմյանց հետ լիարժեք շփվել և հաղորդակցվել: Խաղային գործունեությունը կատարում է մի շարք գործառույթներ`

- Երեխաների մոտ հետաքրքրություն է առաջացնում, զվարճալի է և ոգևորում է մասնակիցներին
- Խաղային տեղնուղղիաների միջոցով երեխաները ինքնահաստատվում են
- Խաղային դժվարությունների հաղթահարումը, համընկնում է նաև կենսական դժվարությունների հաղթահարման հետ
- Խաղային պրակտիկայում փոխվում են անձնային որակները
- Խաղային տեխնոլոգիաների շնորհիվ կարելի է ի ցույց դնել սեփական թաքնված ուժերը:

Մուխինան գրում է, որ «Խաղը միշտ իրականացվում է ինքնակամորեն, ներառում է մրցակցության տարրեր, մասնակիցներին հաճույք է պատճառում, օգնում ինքնահաստատվել » [6, էջ 25]:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ

ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆ ԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները պետք է գործեն ոչ թե ուսումնական գործընթացի օժանդակ այլ ոչ հիմնական տարր:Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի:Ուսուցման գործընթացը պետք է կազմակերպել օգտագործելով երեխաների բոլոր զգայարանները. ուսուցիչն ավելի քիչ պիտի խոսի, ավելի շատ ցուցադրի, ավելի քիչ կատարի, ավելի շատ մասնակից դարձնի:Սա նշանակում է, որ դպրոցական ուսումնառության առաջին իսկ օրվանից պետք է սկսել աշխատանքը երեխաների զգայարանների զարգացման և ուսումնական գործընթացում դրանց ակտիվացման ուղղությամբ: Իսկ այդ ամենը կարող ենք կատարել տեղեկատվական- հաղորդակցական տեխնոլոգիաների ընձեռած լայն հնարավորությունների շնորհիվ: ՏՐՏ օգտագործման

Նպատակահարմարության մասին են խոսում կրտսեր դպրոցականի տարիքային այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են տեսողական- պատկերավոր մտածողությունը, ինչպես նաև անալիզատորների անհավասար և ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ երեխաները ընկալում են ինֆորմացիան: Տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների շարքին կարող ենք դասել կրտսեր դպրոցականների անհատական կարողությունների և հմտությունների ձևավորումը, որոնց շնորհիվ կկառուցվի ճանաչողական գործընթացը: Կրտսեր դպրոցական տարիքում զարգացած է երեխաների պատկերային մտածողությունը, հետևաբար համակարգչի էկրանին ցուցադրվող գործողությունների հաջորդականությունը ըմբռնելի է դարձնում ուսուցանվող նյութը: Բացի այդ եթե համեմատենք պատկերավոր, գունավոր և լայնէկրան ցուցադրվող նյութը գրքային նյութի հետ ապա վերջինս կրտսեր դպրոցականի համար փոքր- ինչ ընկալելի չէ, պատճառը գուցե այն է, որ տեխնոլոգիաների շնորհիվ ցուցադրվող շարժանկար պատկերները ավելի հոգեհարազատ են կրտսեր դպրոցականի հուզական ֆոնին և հոգեբանական վիճակին: Հուզականությունը նախ արտահայտվում է նրանում, որ կրտսեր դպրոցականների ընկալումը, դիտումները, երևակայությունը, մտավոր գործունեությունը սովորաբար երանգավորված են հույզերով: ԵՎ հետո նրանք շատ անմիջական և անկեղծ են իրենց զգացմունքները արտահայտելիս: Այդ պատճառով աշխատելով տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հետ պետք է անպայման հաշվի առնել այս նրբությունները: Եթե ուսումնա-դաստիարակչական աշխատանքը ճիշտ կազմակերպվի ապա կրտսեր դպրոցականի մոտ կձևավորվի աշխատասիրություն, ջանասիրություն, կարգապահություն, և աստիճանաբար կզարգանա վարքի կամային կարգավորում: Կրտսեր դպրոցական տարիքում նկատելի է առավել հետաքրքրվածությունը, մասնավորապես իմացական հետաքրքրությունները, շրջակա աշխարհը ճանաչելու հետաքրքրությունը, ավելի շատ տեղեկություն իմանալու բուռն ձգտումը: Արագորեն ձևավորվում է հետաքրքրություն տեխնիկայի նկատմամբ, առավելապես տղաների մեջ: Տարիքային առանձնահատկություն է նաև կամքի ընդհանուր անբավարությունը: Կրտսեր դպրոցականը դեռևս չի կարողանում տևականորեն հետամուտ լինել իր ծրագրած նպատակին, համառորեն հաղթահարել դժվարություններն ու արգելքները: Նա անհաջողության դեպքում կարող է կորցնել հավատը իր ուժերի և հնարավորությունների նկատմամբ: Սա բացառելու համար ուսուցիչը պետք է անընդհատ խրախուսի գործունեությունը և ուսումնասիրի աշակերտների անձնավորության արտաքին և ներքին դրսևորումները, անհրաժեշտ է ճիշտ հասկանալ գործողությունների դրդապատճառները : Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունների ճանաչման համար շատ կարևոր է նրա հետ զրույց կամ հարցազրույց վարելը, խոսքին հետևելը: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հետ աշխատելիս մեծ տեղ պետք է հատկացնել կրտսեր դպրոցականի տարիքային և հոգեբանական այնպիսի առանձնահատկությունները ինչպիսիք են մտավոր զարգացման առանձնահատկությունները , հիշողությունը, մտապահման

իմաստավորվածությունը և կայունությունը, վերարտադրման ճշգրտությունը, դիտունակությունը, երևակայության և ստեղծագործական գործունեությունը:

Այսպիսով նշված առանձնահատկությունները հաշվի առնելու դեպքում դասվարը կկարողանա հստակ և մտածված կերպով, տեխնոլոգիաների ընձեռած լայն հնարավորությունների շնորհիվ դասը դարձնել առավել հետաքրքիր և պատկերավոր, առավել հասանելի:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հետ աշխատելիս առաջնային պետք է համարել կրտսեր դպրոցականի առողջությունը: Դասին նախապատրաստվելիս հանգամանորեն պետք է մտածել ՏՅՏ օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին: Տեխնոլոգիաները որքանով կարող են օգնել և ավելի ըմբռնելի, պատկերավոր դարձնել ուսուցման և դաստիարակության գործընթացը նույնքան էլ կարող են վատ ազդեցություն ունենալ կրտսեր դպրոցականի առողջության վատթարացման գործում: Այդ պատճառով նախքան դասի սկսելը անհրաժեշտ է լինել կրտսեր դպրոցականի առողջության պահպանման համար: Իհարկե մենք գիտակցում ենք, որ ՏՅՏ- ները ունեն երկու ազդեցություն՝ դրական և բացասական: Ուսուցման գործընթացում միշտ պետք է գերակայի դրականը, իսկ բացասական ազդեցությունից խուսափելու համար պետք է դասը մեթոդապես ճիշտ կազմակերպել, որը շատ կարևոր է դեռևս ֆիզիկապես ոչ լիովին ձևավորված անձի համար: Ուսուցման և դաստիարակության գործընթացի կազմակերպումը տարրական դպրոցում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա կրտսեր դպրոցականի ճանաչողական կարողությունների ակտիվացմանը և հոգևոր զարգացմանը: Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են այն մասին, որ տեխնոգեն փոփոխությունների, տեխնոլոգիաների և ինֆորմացիայի ծավալի մեծացման դարում նկատվում են նեգատիվ երևույթներ երեխաների առողջության վիճակի դինամիկայում: Սա պայմանավորված է նրանով, որ ներկա ժամանակներում երեխաները տևական ժամանակ են անցկացնում համակարգչի առջև: Չպետք է մոռանալ այն գործոնների մասին, որոնց ենթարկվում է երեխան՝

- Էլեկտրամագնիսական ճառագայթում
- Աչքերի հոգնածություն
- Տեսողության վատթարացում
- Ողնաշարի ծռվածքներ

Վերջինիս պետք է մեծ ուշադրություն դարձնել, քանի որ կրտսեր դպրոցականի ոսկրամկանային համակարգը լիարժեք ձևավորված չէ և մինչև դիրքով երկար նստելը կարող է առողջական լուրջ խնդիրների հանգեցնել: Շատ կարևոր է ուսուցչի կողմից ընտրված ծրագրերը, որոնք պետք է համապատասխանեն կրտսեր դպրոցականի տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին: Ըիշտ ընտրված ծրագրի շնորհիվ կզարգանա երեխաների ուշադրությունը, մտածողությունը և տրամաբանությունը, իսկ սխալ ընտրությունը կհանգեցնի բացասական ազդեցությունների ձևավորմանը, մասնավորապես հոգեկան զարգացման գործընթացի խաթարմանը: Առավել շատ

Են հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձևավորման բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ: Ինֆորմացիոն աշխարհն էլ իր հերթին է ազդում արժեքային համակարգի, դիրքորոշումների, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա: Մեծ է նաև տեղեկատվության կորստից առաջացող սթրեսը, ախտաբանական հոգնածությունից խախտվում է աչքի արյան շրջանառությունը, որպես հակազդեցություն արյան միկրոանոթները լայնանում են: Տեսողության վրա վատ ազդեցություն է թողնում գուլնի, շթրիֆի, Էկրանի սխալ տեղադրությունը: Համակարգչով աշխատանքը ենթադրում է տեքստի մուտք կամ ընթերցում, պատկերների և գծագրերի ստեղծում, սա հանգեցնում է տեսողական լարման: Աչքերի և մոնիտորի միջև հեռավորությունը պետք է լինի ամենաքիչը 70 սմ, իսկ փոքրերին համակարգչի առջև թույլատրվում է անցկացնել առավելագույնը օրական 2-3 ժամ, հանգստի միևնույն ժամանակը 15 րոպե: Վերահսկողություն պետք է սահմանել ոչ միայն դպրոցում այլև տանը, ծնողները հետևողական պետք է լինեն երեխաների առողջության պահպանման համար, հնարավորինս զերծ պահելով բացասական ազդեցություններից: Առանց տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների այսօր անհնար է պատկերացնել ուսուցումը, բայց միաժամանակ անհրաժեշտ է գիտակցել, որ ավելի արդյունավետ կերպով կարող է որակ ապահովել, երբ այն իրականացվում է ճիշտ ժամանակին, տեղին և համապատասխան չափով:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները պետք է հարմարեցնել ուսուցման և դաստիարակության գործընթացին, դասերը կազմակերպել այնպես, որ վնաս չպատճառի կրտսեր դպրոցականի առողջությանը, միաժամանակ դասը դարձնել ավելի հաճելի և դյուրըմբռնելի: Եթե ՏՀՏ-ների օգտագործմամբ դասը մեթոդապես ճիշտ կազմակերպվի, ապա դրական ազդեցությունը կգերակշռի և կբարձրանա դասի արդյունավետությունը:

Դասարանում կստեղծվի կենդանի մոնոլորտ, որի շնորհիվ կրտսեր դպրոցականները հեշտությամբ կներգրավվեն ուսումնական գործընթացին:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հետ աշխատելիս առաջնային պետք է համարել կրտսեր դպրոցականի առողջությունը: Դասին նախապատրաստվելիս հանգամանորեն պետք է մտածել ՏՀՏ օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին: Տեխնոլոգիաները որքանով կարող են օգնել և ավելի ըմբռնելի, պատկերավոր դարձնել ուսուցման և դաստիարակության գործընթացը նույնքան էլ կարող են վատ ազդեցություն ունենալ կրտսեր դպրոցականի առողջության վատթարացման գործում: Այդ պատճառով նախքան դասի սկսելը անհրաժեշտ է լինել կրտսեր դպրոցականի առողջության պահպանման համար: Իհարկե մենք գիտակցում ենք, որ ՏՀՏ- ները ունեն երկու ազդեցություն՝ դրական և բացասական: Ուսուցման գործընթացում միշտ պետք է գերակայի դրականը, իսկ բացասական ազդեցությունից խուսափելու համար պետք է դասը մեթոդապես ճիշտ կազմակերպել, որը շատ կարևոր է դեռևս ֆիզիկապես ոչ լիովին ձևավորված անձի համար: Ուսուցման և

դաստիարակության գործընթացի կազմակերպումը տարրական դպրոցում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա կրտսեր դպրոցականի ճանաչողական կարողությունների ակտիվացմանը և հոգևոր զարգացմանը: Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են այն մասին, որ տեխնոգեն փոփոխությունների, տեխնոլոգիաների և ինֆորմացիայի ծավալի մեծացման դարում նկատվում են նեգատիվ երևույթներ երեխաների առողջության վիճակի դինամիկայում: Սա պայմանավորված է նրանով, որ ներկա ժամանակներում երեխաները տևական ժամանակ են անցկացնում համակարգչի առջև: Չպետք է մոռանալ այն գոծոնների մասին, որոնց ենթարկվում է երեխան՝

- Էլեկտրամագնիսական ճառագայթում
- Աչքերի հոգնածություն
- Տեսողության վատթարացում
- Ողնաշարի ծռվածքներ

Վերջինիս պետք է մեծ ուշադրություն դարձնել, քանի որ կրտսեր դպրոցականի ոսկրամկանային համակարգը լիարժեք ձևավորված չէ և մինևույն դիրքով երկար նստելը կարող է առողջական լուրջ խնդիրների հանգեցնել: Շատ կարևոր է ուսուցչի կողմից ընտրված ծրագրերը, որոնք պետք է համապատասխանեն կրտսեր դպրոցականի տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին: Ճիշտ ընտրված ծրագրի շնորհիվ կզարգանա երեխաների ուշադրությունը, մտածողությունը և տրամաբանությունը, իսկ սխալ ընտրությունը կհանգեցնի բացասական ազդեցությունների ձևավորմանը, մասնավորապես հոգեկան զարգացման գործընթացի խաթարմանը: Առավել շատ են հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձևավորման բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ: Ինֆորմացիոն աշխարհն էլ իր հերթին է ազդում արժեքային համակարգի, դիրքորոշումների, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա: Մեծ է նաև տեղեկատվության կորստից առաջացող սթրեսը, փստաբանական հոգնածությունից խախտվում է աչքի արյան շրջանառությունը, որպես հակազդեցություն արյան միկրոանոթները լայնանում են: Տեսողության վրա վատ ազդեցություն է թողնում գույնի, շթիֆի, Էկրանի սխալ տեղադրությունը: Համակարգչով աշխատանքը ենթադրում է տեքստի մուտք կամ ընթերցում, պատկերների և գծագրերի ստեղծում, սա հանգեցնում է տեսողական լարման: Աչքերի և մոնիտորի միջև հեռավորությունը պետք է լինի ամենաքիչը 70 սմ, իսկ փոքրերին համակարգչի առջև թույլատրվում է անցկացնել առավելագույնը օրական 2-3 ժամ, հանգստի մինիմալ ժամանակը 15 րոպե: Վերահսկողություն պետք է սահմանել ոչ միայն դպրոցում այլև տանը, ծնողները հետևողական պետք է լինեն երեխաների առողջության պահպանման համար, հնարավորինս զերծ պահելով բացասական ազդեցություններից: Առանց տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների այսօր անհնար է պատկերացնել ուսուցումը, բայց միաժամանակ անհրաժեշտ է գիտակցել, որ ավելի արդյունավետ կերպով կարող է որակ ապահովել, երբ այն իրականացվում է ճիշտ ժամանակին, տեղին և համապատասխան չափով:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները պետք է հարմարեցնել ուսուցման և դաստիարակության գործընթացին, դասերը կազմակերպել այնպես, որ վնաս չպատճառի կրտսեր դպրոցականի առողջությանը, միաժամանակ դասը դարձնել ավելի հաճելի և դյուրըմբռնելի: Եթե ՏՐՏ-ների օգտագործմամբ դասը մեթոդապես ճիշտ կազմակերպվի, ապա դրական ազդեցությունը կգերակշռի և կբարձրանա դասի արդյունավետությունը:

Դասարանում կստեղծվի կենդանի մտնուլորտ, որի շնորհիվ կրտսեր դպրոցականները հեշտությամբ կներգրավվեն ուսումնական գործընթացին:

ՏՐՏ-ՆԵՐԻ ԿԻՐԱՌԱՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ՏՐՏ – ները կարող են արդյունավետ միջոց լինել՝

1. **Թեմայի նշման համար**- դասի թեման ներկայացված է սլայդների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը:

Որպես ուսուցչի բացատրություններին ուղեկից կարող են օգտագործվել կոնկրետ դասերի համար ստեղծված մեդիա կոնսպեկտ- շնորհանդեսներ, ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, տեսանյութեր, անիմացիաներ:

2. **Որպես տեղեկատու- ուսուցողական ձեռնարկ**- ուսուցման մեջ այսոր հատուկ շեշտադրում է դրվում սովորողի ինքնուրույն գործունեության վրա:

Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման պրոցեսի կազմակերպիչ, սովորողների ինքնուրույն գործունեության ղեկավար, ով անհրաժեշտ օգնություն և աջակցություն է ցույց տալիս:

3. **Գիտելիքների ստուգման համար**

Համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը, ակտիվացնում է կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեությունը, թեստերը կարող են լինել հարցաչարի տարբերակով, որոնց պատասխանները սովորողը գրառում է տետրում կամ հատուկ բլանկի վրա: ՏՐՏ-ները արդյունավետ են որովհետև

- Կավիճով գրված կամ գծված պատկերի որակը չի կարող համեմատվել Էկրանի վրայի կոկիկ, պայծառ, հստակ և գունավոր պատկերի հետ
- Գրատախտակի և կավճի օգնությամբ դժվար և անհարմար է տարբեր գործիքների օգնությամբ բացատրել աշխատանքը
- Ճնորհանդեսի ներկայացման ժամանակ նույնիսկ պրոյեկտորի օգտագործման դեպքում սովորողի աշխատանքային տարածքը բավականին լավ լուսավորված է
- Տեսանելի մակարդակը բարձրանում է դասի ժամանակ
- Բարձրանում է դասի արդյունավետությունը
- Տեղի է ունենում միջառարկայական կապերի բացահայտում
- Ստեղծող և ՏՅՏ օգտագործող դասավանդողը ստիպված է մեծ ուշադրություն դարձնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանությանը, որը դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա

Փոխվում է վերաբերմունքը անհատական համակարգչի նկատմամբ, երեխաները սկսում են ընկալել այն որպես ունիվերսալ գործիք մարդկային գործունեության ցանակցած բնագավառի աշխատանքի համար, այլ ոչ թե որպես գործիք միայն խաղալու համար:

ՏՅՏ-ների կիրառման առանձնահատկությունները կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և կհասցնեն նյութի յուրացման բարձր մակարդակի`

- Դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում, առաջադրանքների տարբերակներ, սխեմաներ
- Ուսումնական նյութի վերաբերյալ շնորհանդեսի ստեղծում
- Պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում
- Արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում, օգտագործում
- Կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում
- Տեքստային աշխատանքների ստեղծում
- Մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով:

ՏՅՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են են թողնում սովորողների հոգեբանա- հուզական ֆոնի վրա: Դասի անցկացումը մեղիայի շնորհիվ գրավում է կրտսեր դպրոցականներին: Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ լուսանկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարի, ձայնի օգնությամբ: Այս տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերը արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Որակական առումով նոր հնարավորությունները ակնհայտ են, եթե

ուղղակի համեմատենք բանավոր նկարագրությունները տեսաձայնային ներկայացման հետ: Քանակական առավելությունները արտահանըտվում են նրանով, որ մեդիամիջավայրը անհամեմատելի մեծ է տեղեկության խտությամբ: Տեքստի առաջին էջը դասավանդողը արտաբերում է 1-2 րոպեի ընթացքում: Այդ նույն րոպեի ընթացքում լայնեկրան տեսանյութը բերում է ինֆորմացիայի ավելի մեծ ծավալ: Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5%, տեսածի 20%: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50%: Մեդիաձրագրերը ինֆորմացիան մատուցում են զանազան ձևերով և հենց դրանով էլ ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ են դարձնում: Կրտսեր դպրոցում ՏՀՏ- ների օգտագործումը սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը, նրա մեջ նախկինի պես պահպանվում են բոլոր հիմնական փուլերը, փոխվում են միայն դրանց ժամանակավոր բնութագիրը: Ժամանակի խնայողությունը անհրաժեշտ նյութի ուսումնասիրման համար միջինում կազմում է 30%, իսկ ձեռք բերված գիտելիքները պահպանվում են ավելի երկար: Մեդիաներկայացման կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված, վերլուծական մտածողությունը: Բացի դրանից կարելի է օգտագործել ճանաչողական գործունեության կազմակերպման զանազան ձևեր՝ ֆրոնտալ, խմբային, անհատական: ՏՀՏ- ները ավելի օպտիմալ և արդյունավետ են համապատասխանում դասի երեք միասնական դիդակտիկ նպատակներին.

Կրթական առումով՝

- Սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալում
- Ուսումնասիրության օբյեկտների, կապերի և հարաբերությունների ըմբռնում

Չարգացման առումով՝

- Կրտսեր դպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների զարգացում
- Ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտություններ
- Կրտսեր դպրոցականի ստեղծագործական գործունեության ինտենսիվացում
- Ուշադրության զարգացում
- Հիշողության ամրապնդում

Դաստիարակչական առումով՝

- Գիտական աշխարհայացքի ձևավորում
- Ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտությունների և կարողությունների ձևավորում
- Ընկերության, փոխադարձ օգնության զգացումների դաստիարակում

Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը րոպեում ընկալում է և ընդունակ է վերլուծելու մինչև հազար պայմանական միավոր տեղեկություն, իսկ տեսողական օրգանների «միացման» դեպքում մինչև 100 հազար այդպիսի միավոր: Կրտսեր դպրոցականի մոտ ավելի զարգացած է տեսողական-պատկերավոր մտածողությունը և կամային ուշադրությունը վերջինս

կենտրոնանում է, երբ նրան հետաքրքիր է, երբ ուսումնական նյութը տարբերվում է պարզությամբ, պայծառությամբ, երբ սովորողի մոտ դրական հույզեր է առաջանում: Կա ևս մեկ առանձնահատկություն՝ տեքստ- նկար հարաբերակցության մեջ վերջինս գերակշռում է: Տեքստը եզրակացություններ են, ժամկետներ, հիմնաբառեր: Ամենազլխավորն այն է, որ կարող ենք կարդալ բոլորը, իսկ շարժանկարում տառերը գրավում են ուշադրությունը և նույնիսկ ամենափոքրերը կցանկանան բոլորը կարդալ:

SՐՏ-ների կիրառելիության առանձնահատկությունները կարող են օգնել՝

- Կրտսեր դպրոցականին նախապատրաստել նոր նյութի հաղորդմանը
- Նոր նյութի յուրացմանը
- Թեմայի ամրապնդմանը
- Դասի ամփոփմանը
- Տնային առաջադրանքների կատարմանը

SՐՏ-ները օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները՝

- Յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- Համակարգել ձեռք բերված գիտելիքները
- Ձևավորել ինքնակառավարման հմտություններ
- Ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ
- Ուսումնական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում: Տեխնոլոգիաները կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-գննական մեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների՝ տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբ զուգահեռ միանում է նաև տեսողական հիշողությունը: Կրտսեր դպրոցում ուսումնական պրոցեսի կազմակերպման փորձը SՐՏ- ների օգտագործմամբ նկարագրված մոդելով թույլ է տալիս խոսել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման այլ միջոցների համադրման արդյունավետ մակարդակի մասին, որը ենթադրում իմացություն գործունեության միջոցով: Այն սովորողի ուսուցման կազմակերպման ձևերի, բովանդակության, մեթոդների փոխման երկար և շարունակական գործընթաց է:

SՐՏ օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, օժանդակող գործընկեր: Հաշվի առնելով կրթակարգի պահանջները, դպրոցում պետք է ստեղծել էլեկտրոնային գրադարան: Սա մի յուրահատուկ ռեսուրս- բազա է, որը ստեղծվում և կրառվում է ուսումնառության ընթացքում: Համակարգը դառնում է դպրոցի կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողի մասին տվյալների

կուտակման, ծնողների հետ տարվող աշխատանքի և արտադասարանային գործունեության իրականացման գործիք: Հնարավորություն է տալիս՝

- Ինքնուրույն տեղեկատվություն որոնելը, հավաքելը, ուսումնասիրելը
- Օգտագործել տեխնոլոգիական համակարգերը, տեղեկատվությունն ու ծրագրերը
- Բարձրացնել ուսումնառության մակարդակը
- Նյութի նկատմամբ զարգացնել հետաքրքրություն
- Միավորել զգայական պատկերները, միջառարկայական զուգահեռները և իրական կյանքի հետ կապը
- Ուսուցումը հարմարեցնել սովորողների ուսումնառության անհատական ոճերին:

Ծնորհանդեսը հնարավորություն է տալիս ուսուցչին՝

- Դասը պատկերավոր ներկայացնել
- Ամրապնդել նոր նյութի հաղորդման ընթացքը
- Կարգավորել ներկայացվող տեղեկատվության ծավալն ու արագությունը
- Մեծացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը

Ծնորհանդեսը հնարավորություն է տալիս աշակերտներին

- Առավել հետաքրքիր կերպով ուսումնասիրել նոր նյութը
- Չարգացնել կամային ուշադրությունը

Դասի թեման ներկայացվում է լուսանկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ՝ տեսության համառոտ ներկայացմամբ:

Հանրակրթական պետական կրթակարգը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության իրականացման գործում տեղեկատվական- հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը » [3, էջ 64]: Նոր տեխնոլոգիաների օգտագործումը զգալիորեն բարձրացնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման արդյունավետությունը՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը և ապահովելով ինքնակրթության ու շարունակական կրթության լայն հնարավորություն: Ժամանակակից համակարգիչները թույլ են տալիս ներառելու տեքստեր, գրաֆիկա, ձայն, անիմացիա, լուսանկարներ, տեսագրություններ: Այս ամենը ուսումնական նյութը շարժման և զարգացման մեջ ցուցադրելու, պարզաբանելու հնարավորություն է տալիս՝ այդ կերպ ուսումնական նյութը դարձնելով ավելի տեսանելի: Օգտագործելով համակարգչի բացառիկ հնարավորությունները կարելի է դասը վերածել դիտողական գործընթացի: Արդյունքում աշակերտը ոչ թե տեղեկության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել հետքեր, պատկերավոր տեսանյութ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով մեր ուսումնասիրությունների, վերլուծությունների արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ

- Տեղկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դասվարը կկարողանա դասարանում ստեղծել կենդանի մտնուլորտ և կրտսեր դպրոցականները ավելի ակտիվ կդառնան, իսկ դասապրոցեսը ավելի գունեղ և պատկերավոր: Օգտագործելով տեխնոլոգիական, կրթական համակարգերը և տեղեկատվությունը կրտսեր դպրոցականը հնարավորություն կունենա նյութի նկատմամբ լինել առավել հետաքրքրված: ՏՐՏ-ները կնպաստեն համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռք բերմանը:
- Տարրական դպրոցում նյութի մատուցումը տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով պետք է հասանելի, ընկալելի լինի կրտսեր դպրոցականի համար: Տեղեկատվությունը պետք է դարձնել կրտսեր դպրոցականի մշակույթի ու ձևավորված աշխարհայացքի տարրը: Առավել արդյունավետ են խաղաին տեխնոլոգիաները, որոնց շնորհիվ երեխաները հեշտությամբ են ներգրավվում դասին: Խաղաին տեխնոլոգիաները կրտսեր դպրոցականին ընձեռում են համամարդկային արժեքներ և ինքնադրսևորման միջոց են հանդիսանում:
- ՏՐՏ-ները բարձրացնում են կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացի արդյունավետությունը, բարելավում են դասի անցկացման մեթոդները: ՏՐՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են են թողնում կրտսեր դպրոցականի հոգեբանա- հուզական ֆոնի վրա: ՏՐՏ-ները պետք է համապատասխանեն կրտսեր դպրոցականի տարիքային և հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին, քանի որ կրտսեր դպրոցականի հոգեբանական վիճակը և հուզական ֆոնը փոքր-ինչ բարդ է: Կրտսեր դպրոցականի ուսուցման և դաստիարակության գործընթացում մեծ է տեղկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությունը: Այն ունի ինչպես դրական այնպես էլ բացասական կողմեր, սակայն մեր առջև դրված նպատակներին հասնելով կարող ենք կանխել կամ բացառել բացասականը և առաջ մղել միայն դրականը:
- ՏՐՏ-ները իրենց կիրառելիությամբ շատ արդյունավետ են տարրական դպրոցում, կրտսեր դպրոցականը ուսումնական նյութի հանդեպ կցուցաբերի մեծ հետաքրքրություն և կդառնա ոչ թե միայն տեղեկության

պասիվ ստացող, այլ հենց ինքն էլ կկարողանա փոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական նոր նյութ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Յայկ « Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ» Երևան 2012, էջ 76-78
2. Վարդումյան Ս. , Ջաղինյան Ն. , . Հարուստեանյան Լ , Գարրի Վարելլա, «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», Երևան 2005 իրատ. էջ 19-20
3. Ղուկասյան Լ.Ն «Մեթոդի ընտրությունը որպես ուսումնադաստիարակչական գծընթացի արդյունավետ պայման» Գիտական տեղեկագիր (1) Գյումրի 2015 իրատ. էջ 82-85
4. Խառատյան Լ.«ՏՅՏ ներդրումը տարրական դասարաններում», «Նախաշավիղ գիտամեթոդական հանդես» (5), 2013 իրատ. էջ 22-26
5. Քարամյան Գ. «Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում» «Նախաշավիղ գիտամեթոդական հանդես» (5), 2012 իրատ. էջ 20-22
6. Мухина С.А; Соловьева А.А « Современные инновационные технологии обучения. » М.. 2008 стр 25-26